ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/09

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2018թ. թիվ 03/26-3/982-18 գրությամբ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06934048) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.01.2018թ. թիվ ԴՎԱ/193 գրության հիման վրա, 23.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.01.2018թ. թիվ ԴՎԱ/193 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 15-ից միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ էմալների մատակարարման մասով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 18.01.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արտյոմ Համբարյանը և Արսեն Վարդանյանը:

3. **<u>« Վանպոլիմեդ » ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2018թ. թիվ 03/26-3/982-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2018/09 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2018թ. թիվ 03/26-3/982-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.01.2018թ. թիվ ԴՎԱ/193 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագիրը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին 29.12.2017թ. ուղղված թիվ 8 զեկուցագիրը, Պատվիրատուի՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին ուղղված 18.01.2018թ. թիվ ԴՎԱ/172 գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.06.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում;

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրի և Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է՝ 2017թ. 3-րդ եռամսյակում մատակարարել Էմալ ԷՊ-140 գույները՝ համապատասխանաբար ըստ չափաբաժինների կարմիր (50լ), սև (50լ), սպիտակ (50լ), մուգ շականակագույն (300լ), կապույտ (50լ), մուգ կանաչ (50լ), դեղին (300լ), և 2-րդ եռամսյակում՝ նշագծման ճանապարհային նիտրոներկ (2500 կգ):

Ի թիվս Պայմանգրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրով սահմանված այլ պահանջների, Պատվիրատուի կողմից սահմանվել է հետևյալ պահանջը. ծածկողունակությունը ոչ ավելին, քան 75/120գ/մ2:

Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 2,100,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

ՀՀ ՋՈՒ ավիացիայի պետ-վարչության պետը 20.12.2017թ. թիվ ելք 1285 զեկուցագրով հայտնել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքի ծածկողականությունը չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջին:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 20.12.2017թ. տրված Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ բացասական եզրակացության համաձայն՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի կողմից Էմալ ԷՊ-140 ապրանքատեսակը (7 չափաբաժինների մասով) 3-րդ եռամսյակում չի մատակարարվել: Բացի այդ, ըստ նույն եզրակացության, առկա է եղել տեխնիկական բնութագրին անհամապատասխանություն:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին ուղղված 29. 12.2017թ. զեկուցագրով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետը, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի 3.1.1 և 3.1.2 ենթակետերի դրույթները (մատակարարման ժամկետը խախտվել է 10 օրից ավելի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետով նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք)՝ առաջարկել է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը՝ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառելով օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի տույժերը և տուգանքները:

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 15-ից միակողմանի

մասնակի լուծել է վերը Պայմանագիրը՝ էմալների մատակարարման մասով (7 չափաբաժիններով):

Պատվիրատուն 18.01.2018թ. թիվ ԴՎԱ/172 գրությամբ դիմել է «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին՝ տեղեկացնելով, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 15-ից միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ էմալների մատակարարման մասով՝ միաժամանակ առաջարկելով Ընկերությանը նույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում վճարել Պայմանագրով նախատեսված տույժերը և տուգանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ն 20.06.2017թ. կնքել է ՀՀ պաշտպանության նախարարության հետ N ՇՀԱՊՁԲ-23/5-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, սակայն չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

• 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով(...):

Խորհուրդը գտնում է, որ պայմանագրով նախատեսված ապրանքը սահմանված ժամկետում չմատակարարելով՝ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը՝ նույն պայմանագրի թվով 7 չափաբաժինների մասով:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց առ այն, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2018թ. գրությամբ «Վանպոլիմեդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06934048) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ